Հավելված
Հաստատված է Հայաստանի
Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2018 թվականի
սեպտեմբերի 26-ի N360Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ …….....….3

1. Իրավական ոլորտի բարեփոխումներ և իրավական գործառույթներ …….....…4

2. Սակագնային քաղաքականություն …….....…...8

3. Լիցենզավորում ……...…….....….10

4. Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ ……..…….....12

4.1. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ 12

4.2. Սպառողների դիմումների քննարկում 15

5. Էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ …….....…..16

6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն…….…….…….....…..21

7. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ…….....……..…....…….....…....22

8. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը և համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների ու հասարակական կազմակերպությունների հետ…….....…..24

9. Միջազգային համագործակցություն…….....…….…….....…….....26

10. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովումը .....…….....….…….28

11. Հանձնաժողովի 2019 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվը …….....…….29

12. Հանձնաժողովի 2019 թվականի գործունեության ծրագրի հանրային քննարկումը…….....…….29

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն՝
  - իրավաբանական և դատական սպասարկման բաժին,
  - լիցենզավորման բաժին,
- զարգացման և մոնիթորինգի վարչություն՝
  - տնտեսագիտական բաժին,
  - տեխնիկական բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն՝
  - կարգավորման քաղաքականության բաժին,
  - ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժին,
- ներքին աուդիտի բաժին,
- միջազգային համագործակցության բաժին,

- դիմումների քննարկման բաժին,
- նիստերի կազմակերպման բաժին,
- գնումների բաժին,
- տնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի գլխավոր քարտուղար:

1. Իրավական ոլորտի բարեփոխումներ և իրավական գործառույթներ

Կարգավորվող բնագավառների (համակարգերի) իրավական դաշտի կատարելագործումը շարունակական գործընթաց է և հանդիսանում է հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը:

Հանձնաժողովը, 2019 թվականի ընթացքում, իրավական ոլորտի կարգավորման կատարելագործման գործընթացում որդեգրած քաղաքականության իրականացման սահմաններում, շարունակելու է հետամուտ լինել կարգավորվող ոլորտների իրավական ակտերի լրամշակման աշխատանքներին:

Հանձնաժողովը, մասնավորապես, մասնակցելու է կարգավորման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի, իրավական ակտերի և այլ փաստաթղթերի մշակմանը, կատարելագործմանը և իրականացմանը:

Կարգավորվող ոլորտներում իրականացված բարեփոխումների շարքում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավմանն ուղղված՝ հանձնաժողովը լրամշակել է իր 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները և 2017 թվականի մայիսի

31-ի №218Ն որոշմամբ սահմանված՝ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը: Նշված փոփոխություններով կրճատվել է նոր սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու սահմանված գործընթացների թիվը, մասնավորապես, սահմանվել են պարզեցված միացման դեպքերը, երբ դիմող անձի դիմումը ստանալուց հետո անմիջապես վերջինիս ներկայացվում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ՝ մատակարարի կողմից ստորագրված պայմանագրի 2 օրինակի հետ միասին: Կրճատվել են նաև 0.22 կՎ լարմամբ ոչ պարզեցված միացման դեպքերում էլեկտրական ցանցին միացման ժամկետները՝ 45 աշխատանքային օրվա փոխարեն սահմանելով 50 օրացուցային օր:

Նպատակ ունենալով այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողին մատուցած ծառայության վճարը համապատասխանեցնելու գործող գներին, հանձնաժողովը, 2017 թվականի դեկտեմբերի 20-ի №568Ն որոշմամբ սահմանել է, որ 2019 թվականի հունվարի 1-ից յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը վերանայում է հանձնաժողովի 2004 թվականի ապրիլի 14-ի «Այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայության վճարների չափի հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» N 41-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված՝ այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայությունների վճարները՝ դրանց նկատմամբ կիրառելով ընթացիկ տարվա սեպտեմբեր ամսվա սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ: Վերանայման արդյունքում սահմանված մեծությունները ուժի մեջ են մտնում տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության» համաձայնագրից բխող

պարտավորությունների շրջանակում, նշված համաձայնագրին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մոտարկումից հետո հանձնաժողովը ևս 2019 թվականի ընթացքում իր իրավական ակտերը կլրամշակի և կհամապատասխանեցնի համաձայնագրի դրույթներին:

2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչով պայմանավորված՝ հանձնաժողովը ձեռնամուխ կլինի իր մի շարք իրավական ակտերի, այդ թվում՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի, էլեկտրական էներգիայի (հզորության) և բնական գազի ներկրման ու արտահանման գործունեության լիցենզավորման կարգի, էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև, ինչպես նաև վերջիններիս և սպառողների միջև կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերի, էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց միջև կնքված և էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցման կարգի և մի շարք այլ իրավական ակտերի վերանայման, նոր իրավական ակտերի, այդ թվում՝ լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգի մշակման աշխատանքներին:

«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելու պահից 18 ամսվա ընթացքում հանձնաժողովի կողմից ի թիվս այլ ակտերի հաստատվելու են Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր առևտրային կանոններ, էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների պայմանագրերի նոր օրինակելի ձևեր, մանրածախ շուկայի առևտրային կանոններ, բաշխման ցանցային կանոններ, լրամշակվելու են էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային

կանոնները։

Վերը նշված փոփոխություններով պայմանավորված՝ նախատեսվում է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ համատեղ մշակել ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդել և ներկայացնել էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման նոր գործիքներ՝ հենվելով ինչպես միջազգային առաջավոր փորձի, այնպես էլ ներքին շուկայի սպառողների պաշտպանության, արտադրության և սպառման շուկաներում պատասխանատվության միջոցների ներդրման և այլ հիմնարար սկզբունքների վրա։

Խմելու ջրի ոլորտում ոչ բաժանորդների կողմից ապօրինի միացմամբ խմելու ջրի սպառում և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործում հայտնաբերելու դեպքում ծառայությունների մատուցումն անմիջապես չդադարեցնելու և սահմանված կարգով նոր միացմամբ բաժանորդ դառնալու հնարավորություն ընձեռելու նպատակով լրամշակվել է հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները և մշակվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ժամանակավոր պայմանագրի օրինակելի ձև։

2019 թվականին հանձնաժողովը շարունակելու է հետևել իր ընդունած իրավական ակտերի պայմանների պատշաճ կատարմանը և անհրաժեշտության դեպքում ձեռնարկելու է միջոցառումներ խախտումների դեպքերը բացահայտելու և ընկերությանը խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ տալու կամ տույժեր կիրառելու նպատակով։

Ինչպես և նախորդ ժամանակահատվածում, հանձնաժողովն իրականացնելու է վարչական վարույթի, դատական գործընթացների հետ կապված տարբեր բնույթի աշխատանքներ՝ ձեռնարկելով միջոցներ, որպեսզի ապահովվի այդ գործերի քննության բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը։

Հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկելու կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող անձանց և սպառողների միջև

փոխհարաբերությունների կարգավորման ոլորտում խնդիրների վերհանման, դրանց իրավական կարգավորման և այդ գործընթացին վերջիններիս ներգրավման համար, որը հնարավորություն կընձեռի գնահատել, ձևավորել ընդհանուր մոտեցումներ, առաջադրված խնդիրների լուծման համար կիրառել միասնական մեխանիզմներ և մեթոդներ:

Միաժամանակ, հանձնաժողովը քայլեր կձեռնարկի իր գործունեության ծրագրի հաստատման համապատասխան գործընթացների թափանցիկության ապահովման, սպառողների և այլ շահառուների համար տեղեկատվության հասանելիության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Հանձնաժողովը, իր գործառույթների սահմաններում, մասնակցելու է պետական այլ մարմինների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ, օրենսդրությամբ ամրագրված իրավասությունների շրջանակում, համագործակցության և փոխօգնության գործընթացի ամրապնդմանը:

2. Սակագնային քաղաքականություն

Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

Հանձնաժողովը 2019 թվականի ընթացքում ևս հետևողականություն կդրսևորի իրականացվող սակագնային քաղաքականության կատարելագործման աշխատանքներում:

Կշարունակվի էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների, կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների,

իրականացված ներդրումների և սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծության և, ըստ անհրաժեշտության, սակագների վերանայման աշխատանքները:

Հաշվի առնելով ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, մինչև 2019 թվականի հունիսի 1-ը սահմանված կարգով կճշգրտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Այս գործընթացը կրում է պարբերական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

Նկատի ունենալով ՀՀ կառավարության հաստատած էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերով նախատեսված՝ վերականգնվող և այլընտրանքային էներգետիկայի ոլորտին վերաբերող ուղղությունները, ինչպես նաև հաշվի առնելով արևային էլեկտրակայանների զարգացման միտումները և «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային կայանի ծրագրի շրջանակում անցկացված մրցույթի արդյունքները, նախատեսվում է հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայման հարցը դարձնել բազմակողմանի քննարկման առարկա՝ բոլոր շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությամբ՝ դիտարկելով ըստ հզորությունների սակագների տարբերակման, բոլոր կայանների գումարային հզորության սահմանափակման և վերանայման արդյունքում կիրառվող սակագնային քաղաքականության հնարավոր այլ մեխանիզմների կիրառման հարցերը:

Ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես և 2019 թվականին կուսումնասիրվեն և կհաստատվեն էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

«Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության, նրա կողմից հիմնադրված «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և ՀՀ կառավարության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված վարձակալության պայմանագրի գործողությամբ պայմանավորված՝ հանձնաժողովի կողմից «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական

ընկերությանը տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմաններում ամրագրված բազիսային սակագների ճշգրտման մեխանիզմների համաձայն՝ 2019 թվականին կճշգրտվեն խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները՝ մանրածախ ջրամատակարարման ծավալի, էլեկտրաէներգիայի սակագների փոփոխություններով և սղաճով պայմանավորված, որոնք գործողության մեջ կմտնեն 2020 թվականի հունվարի 1-ից:

«ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների համար սահմանված սակագնային փաթեթներն ընդլայնելու և բաժանորդներին իրենց կարիքներին համապատասխան սակագնային փաթեթներ ընտրելու հնարավորություն ընձեռելու նպատակով, ըստ անհրաժեշտության, կսահմանվեն սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների այլընտրանքային սակագնային փաթեթներ:

Նախատեսվում է 2019 թվականին իրականացնել նաև «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության անհրաժեշտ հասույթի վերլուծություն, ուսումնասիրել էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկաներում տեղի ունեցող զարգացումները և անհրաժեշտության դեպքում վերանայել «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառվող սակագնային քաղաքականությունը և սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկը:

3. Լիցենզավորում

2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով պայմանավորված՝ հանձնաժողովը լրամշակելու է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և տրամադրված լիցենզիաները՝ դրանք համապատասխանեցնելով գործող կարգավորումներին: Հանձնաժողովը միաժամանակ նախաձեռնում է

էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մասնակիցներին տրամադրման ենթակա գործունեության նոր տեսակների համար լիցենզիաների պայմանների օրինակելի ձևերի մշակման աշխատանքներ։

2019 թվականին, ի թիվս կարգավորվող ոլորտում իրականացվող լիցենզավորման գործառույթի, նախատեսվում է «Գազ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի իրականացման համար, համապատասխան հայտի հիման վրա երկարաձգել «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից բնական գազի ներկրման և Իրանի Իսլամական Հանրապետություն էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիաների գործողության ժամկետները։

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատվել է «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» շրջանակում անցկացված գնման ընթացակարգի հաղթողը։ Ուստի համապատասխան հայտի հիման վրա, հանձնաժողովի կողմից կտրամադրվի վերոնշյալ կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա։ Ինչ վերաբերում է մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների տրամադրմանը, ապա հանձնաժողովը կշարունակի նշված գործառույթի իրականացումը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերը։

2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում աստիճանաբար անցում է կատարվելու էլեկտրաէներգետիկական ազատականացված շուկայի նոր մոդելին, ինչի նպատակով ներդրվելու են էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի, մատակարարի (երաշխավորված մատակարարի) ինստիտուտը, որոնք լիցենզավորման ենթակա գործունեություններ են։ Ուստի հանձնաժողովը էներգետիկայի բնագավառում գործունեությունների լիցենզավորման կարգերում համապատասխան փոփոխություններ կատարելուց

հետո տրամադրելու է նաև էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի, մատակարարի (երաշխավորված մատակարարի) գործունեության լիցենզիաներ: Վերոնշյալ շուկայի նոր մոդելում լիցենզավորման ենթակա չեն լինի արդեն էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման և ներկրման լիցենզիաները, ինչը կնպաստի միջսահմանային առևտրի ծավալների աճին:

Հենվելով 2018 թվականի տվյալներին՝ հանձնաժողովի կողմից իրականացվել է էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման 63 պայմանագրերի իրավական փորձաքննություն և գրանցում, հանձնաժողովը օրենսդրությամբ սահմանված կարգով 2019 թվականին ևս կշարունակի ապահովել նշված գործընթացի պատշաճ իրականացումը:

4. Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ

4.1 Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ

Կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովման գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության, այնպես և տեղում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Այս գործիքակազմի կիրառմամբ հանձնաժողովը մշտապես բարձրացնում է իրականացվող մոնիթորինգի արդյունավետությունը: Էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ ստացված տեղեկատվության, ինչպես նաև սպառողների դիմում–բողոքների ուսումնասիրության հիման վրա 2019 թվականին ևս մշտական մոնիթորինգի են ենթարկվելու՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին, նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման համակարգին, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացներում սահմանված ժամկետների խախտումները և դրանց պատճառները:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվում են և կիրականացվեն առկա խնդիրների կարգավորմանն ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ նման խախտումները հետագայում բացառելու նպատակով: Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.psrc.am):

2018 թվականի ընթացքում իրականացվել են էլեկտրական էներգիա, բնական գազ, խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպասարկման որակի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվության հավաստիության ընտրանքային ուսումնասիրություններ, որոնց արդյունքները հրապարակվել են հանձնաժողովի

պաշտոնական ինտերնետային կայքում:

Սպասարկման որակի վերահսկողությունը ապահովելու նպատակով հանձնաժողովը 2019 թվականի ընթացքում նույնպես կիրականացնի էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպասարկման որակի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվության հավաստիության ընտրանքային ուսումնասիրություններ:

Էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման աշխատանքները մշտապես գտնվում են հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Այս ուղղությամբ հանձնաժողովը, համագործակցելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ, 2011 թվականից սկսած մի շարք փոփոխություններ է իրականացրել էլեկտրական ցանցին նոր սպառողների միացմանն առնչվող իրավական ակտերում, որոնք հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի կողմից յուրաքանչյուր տարի հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «Էլեկտրական ցանցերին միացում» ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության դիրքի բարելավմանը:

Վերը նշված գործընթացի բարելավման աշխատանքները շարունակվել են նաև 2018 թվական ընթացքում, մասնավորապես, Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 2-ի N140Ն որոշմամբ հերթական անգամ կրճատվել են նոր սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու սահմանված գործընթացների թիվը և միացման ժամկետները, սահմանվել են պարզեցված միացման դեպքերը, երբ դիմող անձի դիմումը ստանալուց հետո անմիջապես վերջինիս ներկայացվում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ՝ մատակարարի կողմից ստորագրված պայմանագրի 2 օրինակի հետ միասին:

Նշված փոփոխությունների մասով Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «Էլեկտրականության միացում» ցուցիչի մասով Հայաստանի դիրքի բարելավմանն ուղղված ազդեցությունն ակնկալվում է 2019 թվականի զեկույցի շրջանակում:

Էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման,

խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների լրամշակումը կրում է շարունակական բնույթ, որն իրականացվելու է նաև 2019 թվականին: Նշված կանոններում փոփոխությունները և լրացումները կատարվում են սպառողներից ստացված դիմում-բողոքների վերլուծության, ինչպես նաև մատակարար ընկերությունների, հասարակական և այլ շահագրգիռ կազմակերպությունների կողմից ներկայացվող առաջարկությունների հիման վրա:

4.2 Սպառողների դիմումների քննարկում

Հանձնաժողովի գործունեության կարևոր ուղղություններից է սպառողների դիմումների քննարկման գործընթացը: Կազմակերպությունների (նաև սպառողների շահերը պաշտպանող) և անհատների կողմից հանձնաժողով են ներկայացվում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում ծառայությունների մատուցմանն առնչվող տարաբնույթ գրավոր և բանավոր դիմումներ ու տեղեկատվություն ստանալու հարցումներ: Դիմումները քննարկվում են, օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում յուրաքանչյուրին տրվում է համապատասխան լուծում կամ պարզաբանում: Հանձնաժողովում գործող թեժ գծի հեռախոսահամարով տրվում է օպերատիվ տեղեկություն սպառողներին հուզող հարցերի, ինչպես նաև խորհրդատվություն մատակարար-սպառող հարաբերություններում դիմումատուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում են դիմումների քննարկման գործընթացի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը (մինչև հաջորդ տարվա առաջին եռամսյակի ավարտը) և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների կայունության զարգացման աջակցություն» ծրագրի շրջանակում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման վերաբերյալ դիմումների քննարկման գործընթացի մասին տարեկան տեղեկատվությունը (մինչև հաջորդ տարվա մայիսի 31-ը): Էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից

հանձնաժողով է ներկայացվում սպառողների դիմումների վերաբերյալ տեղեկատվություն, որը, որպես սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բաղադրիչ, սահմանված կարգով քննարկվում և մշտապես վերահսկվում է հանձնաժողովի կողմից: Վերահսկողությունն իրականացվում է ինչպես եռամսյակային կտրվածքով ներկայացվող հաշվետվությունների վերլուծության և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող ստուգումների, այնպես և կարգավորվող ընկերություններում դիմումների քննարկման ընթացակարգերի հրապարակայնացման (ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում, սպասարկման գրասենյակներում տեղադրում և այլն) միջոցով: Վերլուծության արդյունքներն ամփոփելուց հետո, հանրությանն իրազեկելու նպատակով, ընկերությունների ներկայացրած տեղեկատվությունը եռամսյակային արդյունքներով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Դիմում-բողոքների քննարկման գործընթացն առավել թափանցիկ և սպառողների կողմից վերահսկելի դարձնելու նպատակով հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում գործում է առցանց էլեկտրոնային համակարգ, որտեղ դիմումատուն կարող է հետևել իր դիմումի քննարկման ընթացքին: Վերը նշված գործառույթները, ինչպես նաև դիմումի առարկայի ծագման իրավական կամ կազմակերպական պատճառների վերլուծության արդյունքում գործող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործումը, իր իրավունքներին և պարտականություններին դիմումատուի իրազեկվածության բարձրացման աշխատանքները շարունակական են և 2019 թվականին նույնպես գտնվելու են հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում:

5. Էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ

Հանձնաժողովի գործառույթներից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային

գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքների իրականացումը կարևորվում է սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի որոշման, ներդրումների արդյունավետության գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում է նույն ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

Ներկայումս էներգետիկայի բնագավառում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր են իրականացնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Երևանի ՋերմաԷլեկտրակենտրոն», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» և «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները:

Մասնավորապես, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի բնականոն գործունեության ապահովմանը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերը՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմանը, «Երևանի ՋերմաԷլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը՝ ընկերության հիմնական գործունեության համար անհրաժեշտ

սարքավորումների ձեռքբերմանն ու տեղակայմանը, խմելու ջրի ստորգետնյա համակարգի վերակառուցմանը: «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրությանը և շինարարական աշխատանքների գնահատմանը, շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավմանը, իսկ «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը՝ ընկերության էլեկտրական էներգիայի հաշվառման համակարգի արդիականացման աշխատանքների համար անհրաժեշտ հիմնական միջոցների ձեռքբերմանը:

2019 թվականին հանձնաժողովը կամփոփի վերջիններիս 2018 թվականի ներդրումային գործունեության արդյունքները, ինչպես նաև կքննարկի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերը:

Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանն ուղղելու նպատակով: Անհատապես ուսումնասիրվում է սպառողների կողմից սպասարկման որակի ցուցանիշներին (ընդհատումներ, էլեկտրական էներգիայի լարման թույլատրելի սահմաններից շեղումներ) վերաբերող յուրաքանչյուր բողոք և բարձրացված հարցի լուծման ուղղությամբ հասցեական աշխատանքները ներառվում են ընկերությունների ներդրումային ծրագրերում:

2019 թվականին նախատեսվում է մշակել ներդրումային գործունեության վերլուծության կարգ, որը կսահմանի էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողովի հետ համաձայնեցված զարգացման ներդրումային ծրագրերի շրջանակում ներդրումային գործունեության մոնիթորինգի ընթացակարգը: Ներդրումային գործունեության մոնիթորինգն իրականացվում է լիցենզավորված անձանց կողմից փաստացի իրականացված ներդրումների վերաբերյալ

հանձնաժողով ներկայացվող եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ուսումնասիրության և լիցենզավորված անձի տարածքում մոնիթորինգի միջոցով՝ հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

Հանձնաժողովն ինչպես նախկինում, այնպես և 2019 թվականին, հետևողական է լինելու իր կարգավորման դաշտում գործող հանրային կազմակերպությունների կողմից իրականացվող գնումների արդյունավետության ու թափանցիկության ապահովման հարցում՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագների վրա ազդեցության առումով: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով համապատասխան տեղեկատվությունը հրապարակվում է ինչպես Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և ընկերությունների պաշտոնական ինտերնետային կայքերում:

Գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման և թափանցիկության ապահովման նպատակով հանձնաժողովը սահմանել է իր հաստատած ցանկում ներառված հանրային կազմակերպությունների գնումների կարգերին ներկայացվող միասնական լրացուցիչ պահանջներ, ինչպես նաև այդ կազմակերպությունների գնումների գործընթացի մոնիթորինգի կարգ, որում ամրագրված են մոնիթորինգի մեխանիզմները և գործիքները, իրականացման և արդյունքների հրապարակման պարբերականությունն ու ձևաչափը:

Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման, ինչպես նաև հետագա մոնիթորինգի ենթակա հանրային կազմակերպությունների ցանկերում ներառված են հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում գործունեություն իրականացնող մասնավոր բաժնեմաս ունեցող այն ընկերությունները, որոնց կողմից իրականացվող գնումների արդյունավետությունը կարող է ազդեցություն ունենալ սպառողներին առաքվող էլեկտրական էներգայի և բնական գազի սակագների վրա, ինչպես, օրինակ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունները, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, «Հրազդանի էներգետիկ

կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը, ինչպես նաև «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունը (Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով կատարվող գնումների մասով):

Նշված ցանկում չեն ներառվել 50 տոկոսից ավելի պետական բաժնեմաս ունեցող հանրային կազմակերպությունները, քանի որ նրանց կողմից իրականացվող գնումների գործընթացը կարգավորվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2019 թվականի ընթացքում հանձնաժողովը, համաձայն հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի՝ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատման նպատակով կշարունակի իրականացնել նշված անձանց կողմից հրապարակվող գնումների պլանների մոնիթորինգ, որի արդյունքները կհրապարակվեն հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Հաշվի առնելով այդ գնումների ծավալը՝ նույն ժամանակահատվածում կիրականացվի նաև հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը: Հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգի արդյունքները հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Հանձնաժողովը, 2019 թվականին համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի և միջազգային կազմակերպությունների հետ, կշարունակի աշխատանքները հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կողմից փաստացի

կատարված գնումների արդյունավետության ու թափանցիկության բարձրացման ուղղությամբ՝ կիրառելով նաև արդեն իսկ ներդրված մոնիթորինգի մեխանիզմները:

6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար:

2019 թվականի ընթացքում հանձնաժողովը սահմանված կարգով էներգետիկայի, էլեկտրոնային հաղորդակցության, փոստային կապի, երկաթուղային տրանսպորտի բնագավառների և ջրային ոլորտի կարգավորվող ընկերություններից կստանա ֆինանսական հաշվետվություններ և կկատարի համապատասխան վերլուծություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել են էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի և մատակարարման լիցենզիաների հասկացությունները, էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի և մատակարարման լիցենզիաներ ունեցող անձանց գործունեության շրջանակը, իրավունքները և պարտականությունները՝ էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի և մատակարարման (բացառությամբ երաշխավորված մատակարարի կողմից մատակարարված էլեկտրական էներգիայի) ծավալների, մեծածախ առևտրի և մատակարարման լիցենզիաներ ունեցող անձանց գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու նպատակով նախատեսվում է մշակել էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի և մատակարարման

լիցենզիաներ ունեցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ձևեր:

Առաքված էլեկտրաէներգիայի և մատուցված ծառայությունների դիմաց էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարումների ապահովման նպատակով 2019 թվականին հանձնաժողովը կշարունակի վերահսկել սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ընկերություններին վճարումների կատարման ընթացքը:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

7. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ հանձնաժողովը 2019 թվականի ընթացքում շարունակելու է աշխատանքներ իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի դինամիկ և համաչափ զարգացման, մրցակցության խթանման, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, բաժանորդների իրավունքների և շահերի պաշտպանության, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության և ներթափանցելիության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների

զարգացման և ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերը ապահովված են լարային և (կամ) անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ:

Մասնավորապես, հանձնաժողովի որոշումների համաձայն՝ ՀՀ մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա, գործող հեռախոսակապի արդիականացման՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի լիցենզիոն պարտավորությունների կատարման արդյունքում ընկերությունը 450ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում աշխատող անլար տեխնոլոգիայի կիրառմամբ արդիականացրել է CDMA հեռախոսակապը, ինչը հնարավորություն է ընձեռում ստանալ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ:

Միաժամանակ, հանրային ամրակցված կապի լայնաշերտ տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում հանրապետության 115 բնակավայրում, այդ թվում՝ բոլոր քաղաքներում հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը, իսկ 165 բնակավայրում մատուցվում են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ՝ ADSL տեխնոլոգիայով:

Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման և ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերը ապահովված են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի 2G և 3G տեխնոլոգիաների ծածկույթով, իսկ ՀՀ բնակավայրերի շուրջ 90%-ը՝ հանրային շարժական կապի 4G+ տեխնոլոգիայի ծածկույթով:

Հանձնաժողովի կողմից իրականացվելիք մոնիթորինգի և օպերատորների հետ համագործակցության հետագա աշխատանքները հնարավորություն կընձեռեն բարձրացնելու Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված կապի տեխնոլոգիաների ցանցերի փոխադարձ ներթափանցելիության և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցուցանիշները, որոնք հնարավորություն

կընձեռեն մատուցել հանրային էլեկտրոնային հաղորդակցության կոնվերգենտ ծառայություններ:

Հանձնաժողովը նախատեսում է 2019 թվականի ընթացքում շարունակել աշխատանքները Հայաստանի Հանրապետության տարածքում շարժական կապի լայնաշերտ 4G և 4G+ տեխնոլոգիաների վրա հիմնված ցանցերը ՀՀ բոլոր բնակավայրերում հասանելի դարձնելու, ինչպես նաև 3G, 4G և 4G+ տեխնոլոգիայի վրա հիմնված շարժական կապի լայնաշերտ ցանցերի փոխադարձ ներթափանցելիությունն ընդլայնելու ուղղությամբ:

Միաժամանակ, հաշվի առնելով հանրային ամրակցված և շարժական կապի լայնաշերտ տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքները՝ հանձնաժողովը 2019 թվականին ԵՄ արևելյան գործընկերության երկրների հեռահաղորդակցության ոլորտի կարգավորողների խմբի շրջանակում նախատեսում է մասնակցել նաև ենթակառուցվածքների քարտեզագրման մշակմանն ուղղված աշխատանքներին:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառը հանդիսանում է տնտեսության դինամիկ զարգացող ճյուղ, ուստի հանձնաժողովը նոր տեխնոլոգիաների և ծառայությունների ներդրման համատեքստում մշտապես հետևում է բնագավառի միջազգային զարգացման միտումներին՝ կարգավորման գործընթացը վերջիններիս առավել համահունչ դարձնելու նպատակով:

8. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը և համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների ու հասարակական կազմակերպությունների հետ

Հանձնաժողովը, օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում, հրավիրված դռնբաց նիստերում ընդունում է որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է կարգավորվող ընկերությունների համար: Հավատարիմ մնալով իր հրապարակային և թափանցիկ գործելաոճին, ինչպես նաև նպատակ ունենալով հանրությանը հնարավորինս իրազեկ պահել հանրային ծառայությունների կարգավորման գործընթացներին, հանձնաժողովը 2019 թվականին ևս իր

պաշտոնական ինտերնետային կայքում շարունակաբար կհրապարակի մանրամասն տեղեկատվություն նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ:

Կարևորելով զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցությունը՝ հանձնաժողովը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում նրանց կողմից բարձրացված հարցերը: Ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես և 2019 թվականին հանձնաժողովը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պարզաբանումներ կտրամադրի զանգվածային լրատվության միջոցների գրավոր և բանավոր հարցադրումներին, կապահովի նրանց մասնակցությունը հանձնաժողովի նիստերին և հանրային քննարկումներին, որը կնպաստի կարգավորող մարմնի գործունության թափանցիկության, հրապարակայնության և սպառողների իրազեկվածության աստիճանի բարձրացմանը:

Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը, որը թարմացվում է յուրաքանչյուր շաբաթ, զանգվածային լրատվամիջոցներին, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին և ցանկացած շահագրգիռ անձի հնարավորություն է ընձեռում տեղեկանալ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացին, ծանոթանալ հանձնաժողովի գործունեությանը, ստանալ ծառայությունների սպասարկման որակի և սպառողների իրավունքների վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն:

Կարևորելով սպառողների հետ աշխատանքը՝ հանձնաժողովը 2019 թվականին կշարունակի հանրային հնչեղություն ունեցող, մասնավորապես, սակագների ձևավորմանը, փոփոխությանը և սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի շուրջ սերտ համագործակցությունը սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, ինչի արդյունքում ևս բարձրանում է հանրության իրազեկվածության մակարդակը:

Հաշվի առնելով հանրության առջև հաշվետու լինելու օրենքի պահանջը, ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես և 2019 թվականին հանձնաժողովը կհրապարակի նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը:

2019 թվականին հանձնաժողովի անդամները և աշխատակիցները հանրային

հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով: Կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծությունը:

9. Միջազգային համագործակցություն

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

Մասնավորապես, հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում այն կիրառելու կամ կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը համագործակցում է Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի (NARUC), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), ԵՄ համապատասխան կառույցների, մասնավորապես՝ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբի (EaPeReg), Էներգետիկ համայնքի քարտուղարության, Սևծովյան տարածաշրջանային կարգավորման նախաձեռնության (BSRI), Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA), Ջրային համակարգի միջազգային ասոցիացիայի (IWA) և Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG) հետ: Պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ տարբեր երկրների կարգավորողների համար բաշխման և հաղորդման ցանցերի կիբերանվտանգության, արևային էներգետիկայի զարգացման, էներգետիկ շուկաների ազատականացման խնդիրների վերաբերյալ:

Նախատեսվում է էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման շրջանակում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային

ասոցիացիայի օժանդակությամբ մշակել ուղեցույց էլեկտրական միացումներին, հաշվառքին և հզորությունների կառավարմանը վերաբերող ցանցային կանոնակարգի բաժինների մշակման համար:

Հանձնաժողովը, հանդիսանալով Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) հիմնադիր անդամ, ունի որոշակի պարտականություններ, ներառյալ մասնակցությունը տարեկան ընդհանուր ժողովներին և նախագահների ժողովներին, սակագնային և գնագոյացման, լիցենզավորման և մրցակցության կոմիտեների, բաժանորդների և մանրածախ շուկաների աշխատանքային խմբի նիստերին:

2019 թվականին ևս հանձնաժողովը կշարունակի աշխատանքները ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբի (EaPeReg) շրջանակում՝ այդ երկրների միջև միջազգային ռոումինգի միասնական տարածք ձևավորելու, այդ թվում՝ սակագները նվազեցնելու ուղղությամբ, ինչպես նաև կմասնակցի Համաշխարհային բանկի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից կազմակերպվող սեմինարներին:

2019 թվականին կշարունակվի համագործակցությունը Վրաստանի Էներգետիկայի կարգավորման ազգային հանձնաժողովի և Չեխիայի հեռահաղորդակցության հանձնաժողովի հետ՝ կնքված հուշագրերի շրջանակներում:

Արդյունավետ համագործակցություն է իրականացվում Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ, որը կշարունակվի նաև 2019 թվականի ընթացքում՝ համատեղ աշխատանքային ծրագրին համապատասխան: Մասնավորապես, երկու կարգավորող մարմինների համատեղ աշխատանքային ծրագրի շրջանակում կիրականացվեն համապատասխան օրենքների և կանոնների նախագծերի մշակման, լրամշակման, ոլորտների մասնագետների փորձի փոխանակման, ինչպես նաև նախանշված քննարկումներին և այլ միջոցառումներին մասնակցության աշխատանքներ՝ ըստ կարգավորվող ոլորտների և գործառույթների:

Հանձնաժողովը, հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի «Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության

կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին արձանագրության» (պայմանագրի հավելված 20) շրջանակում նախատեսված աշխատանքների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կողմից լիազորված մարմին, շարունակելու է մասնակցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բնական մենաշնորհների գծով Խորհրդատվական կոմիտեի նիստերին և փորձագետների խորհրդակցություններին:

Համագործակցելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ՝ հանձնաժողովը կշարունակի համագործակցությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան կառույցների հետ Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

Բացի վերը նշված ուղղություններից, հանձնաժողովը մասնակցելու է նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սպառողների իրավունքների պաշտպանության գծով խորհրդատվական կոմիտեի նիստերի ու փորձագետների խորհրդակցությունների աշխատանքներին:

10. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովումը

2019 թվականին հանձնաժողովի վերահսկողության ներքո կգտնվի կարգավորվող ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուտքերի ապահովման գործընթացը՝ լիցենզիաների տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով և «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում կիրառվող տուգանքների, ինչպես նաև էլեկտրակայանները լիցենզիաներով ամրագրված ժամանակահատվածում չգործարկելու, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների մասով:

Ըստ կանխատեսումների՝ 2019 թվականին նշված աղբյուրներից պետական բյուջե կփոխանցվի շուրջ 7.2 մլրդ դրամ, որից ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը կկազմեն շուրջ 6.2 մլրդ դրամ:

11. Հանձնաժողովի 2019 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվը

Հանձնաժողովի 2019 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն կձևավորվի «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ձևավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.75 գործակցով: Օրենքը սահմանում է, որ հանձնաժողովի պահպանման ծախսերի տարեկան մեծության և աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է հանձնաժողովի պահպանման և կարողությունների զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ֆոնդերին:

12. Հանձնաժողովի 2019 թվականի գործունեության ծրագրի հանրային քննարկումը

Հանձնաժողովի 2019 թվականի գործունեության ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելու և ողջամիտ առաջարկությունները ծրագրում ներառելու նպատակով այն հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև համապատասխան գրություններով ուղարկվել հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերություններին և սպառողների

շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններին:

Ծրագրի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները քննարկվել են և տրվել են համապատասխան պարզաբանումներ:

Հանձնաժողովի 2019 թվականի գործունեության ծրագրով նախատեսված աշխատանքները կներառվեն 2019 թվականի աշխատանքային ծրագրում, որը կհաստատվի 2018 թվականի տարեվերջին և կհրապարակվի հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: